

կանին, ուր մնաց մինչեւ իր մահը որ պատահեցաւ 1738ին Յունուար 19ին... Սա՛ այն տասը տարիներուն մէջ՝ ձեռնադրիչ եղած է մերիններուն, յետ Յովնան եպիսկոպոսին: Հատ մօտիկ բարեկամ եւ սրտակից եղած է Մխ. Աբբահօր, եւ իր ծախքով կառուցած է Ս. Բենեդիկտոս Աբբայի նուիրուած մատրան մարմարեայ խորանը: Մեր ժամանակագիրը կը գովէ զինք՝ իբր «մեծահաւատ եւ բարեբարոյ այր:» Ուրիշ բան չի յիշատակուիր ասոր մասին:»

Թաղուեցաւ Վենետիկի Մխիթարեան վանաց Ս. Ղազարի եկեղեցւոյն մէջ առաջի ինքնակառոյց խորանին, որուն տապանագիրը հետեւեալն է (Հ. Թորոսեան, Վարք Մխիթ. Աբբայի էջ 476—477).

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — ԾՆՈՒՆԴ
ԲԻՒԶԱՆԴԵԱՆ
ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ՝ ԵՂԵԱԼ — ԵՂԵՒ Ի ՅԱՅՍ
ՏԱՊԱՆ.
ՍԱ ԱՐԴԱՐԵՒ ՍԱԿՍ ՀԱՒԱ - ՏՈՅ ՃՇՄԱՐՏՈՒ-
ԹԵԱՆ
ՓԱԽԵԱՒ ՅԵՐԿՐԷՆ ԳՐԿԵԱՑ — ԶՎԻՇՏՆ
ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ.
ՊԱՐԿԵՇՏ ՎԱՐՈՒՔ ԶԱՒՈՒՐՍ — ԵԼԻՑ Ի
ԾԵՐՈՒԹԵԱՆ
ԱՅՆՈՒ ԶԱՆՈՒՆ ԲԱՐԻ ԵԹՈՂ — ԶԿՆԻ ՄԱ-
ՀՈՒԱՆ.
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1738. ՅՈՒՆՈՒԱՐԻ 19: